ԱԴՐԲԵՋԱՆ

ԳՆԱՀԱՏԱԿԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ

«Ինտերֆաքս» գործակալութիւնը հաղորդում է, որ Բաքւում, բրիֆինգի ժամանակ, Ադրբեջանի նախագահի մամուլի ծառայութեան ղեկավար Օսման Միրզոյեւը բարձր է գնահատել վերջերս Թիֆլիսում կայացած Այազ Մութալիբովի եւ Վրաստանի նախագահ Զվիադ Գամսախուրդիայի հանդիպման արդիւնքները։

Ինչպէս նշել է Օ. Միրզոյեւը, այն «անգնահատելի նշանակութիւն կ'ունենայ երկու կողմերի համար»։ Երկու հանրապետութիւնների փոխյարաբերութիւններում, առաջին անգամ ստորագրուել է քաղաքական փաստաթուղթ, առանց կենտրոնի մասնակցութեան։ Փաստաթուղթ, որը հրաչակում է համամարդկային արժէքների գերակայութիւնը, ցոյց է տալիս երկու կողմերի վճռականութիւնը յարաբերութիւնները կառուցել միջազգային իրաւունքի հիման վրայ։

-Ադրբեջանը եւ Վրաստանը փոխադարձաբար ճանաչել են միմիանց պետական ինքնիշխանութիւնը, տարածքային ամբողջականութիւնը, մէկը միւսի ներքին գործերին չխառնուելու սկզբունքը,- ընդգծել է հանրապետութեան նախագահի մամուլի ծառայութեան պետը։

ՄՈՒԹԱԼԻԲՈՎՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է

«Ինտերֆաքս»-ի հաղորդման համաձայն, Ադրբեջանի նախագահ Ա. Մութալիբովը ԼՂԻՄում եւ Ադրբեջանի Շահումեանի (Գերամբոյի) շրջանում բնակիչների փոխյարաբերութիւնները կարգաւորելու համար առաջարկել է ստեղծել ազգամիջեան հաշտարար յանձնաժողովներ։

Լեռնային Ղարաբաղի եւ Շահումեանի (Գերամբոյի) շրջանի բնակիչներին ուղղուած նամակներում, որ հրապարակուել է ադրբեջանական հեռուստատեսութեամբ, Ա. Մութալիբովը զգուշացրել է, որ եթէ տարածքաշրջանում կրկին յայտնուեն մարդիկ, որոնք կը փորձեն յարաբերութիւններ սրել ճանապարհների շրջափակմամբ, գիւղերի վրայ յարձակումներով, հրդեհումներով ու սպանութիւններով, ազգամիջեան թշնամանքի հրահրմամբ, ապա նրանց նկատմամբ ամենայն խստութեամբ կը գործադրուեն Ադրբեջանի օրէնքները։

ԱՅՑԵԼԵԼՈՒ Է ԻՍՐԱՅԷԼ

Ադրբեջանի ներքին գործոց նախարարութեան ոչ պաշտօնական տեղեկատուութեան համաձայն, Այազ Մութալիբովը առաջիկայում այցելելու է Իսրայէլ, որտեղ ենթադրւում է, որ երկու կողմերի միջեւ ստորագրուի մի համաձայնագիր՝ Բաքւում իսրայէլական գլխաւոր հիւպատոսարան, իսկ Երուսաղէմում Ադրբեջանի ներկայացուցչութիւն հաստատելու մասին։